ԿԱՐԾԻՔ

ԱՆԴՐԱՆԻԿ ՌԱՖԱՅԵԼԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ «ՄԻՋԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 1991-2011 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ» ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հրապարակային պաշտպանության ներկայացված երիտասարդ հետազոտող Անդրանիկ Առաքելյանի «Միջարաբական համագործակցության առանցքային հիմնախնդիրները Մերձավոր Արևելքում 1991-2011թթ.» խորագիրը կրող թեկնածուական ատենախոսությունը նվիրված է արաբական երկրների ժամանակակից պատմության խիստ կարևոր, բայց միաժամանակ չափազանց բարդ և փոթորկալից մի ժամանակաշրջանի ռազմաքաղաքական վայրիվերումներին, որի առանցքում առանձնահատուկ տեղ են զբաղեցրել Պաղեստինի չլուծված խնդիրը և պաղեստինցիների ոտնահարված իրավունքները, արաբա-իսրայելական հակամարտությունը, ինչով էլ պայմանավորվել են նաև միջարաբական փոխհարաբերությունները:

Ինչպես հայտնի է, երկրորդ աշխարհամարտը հիմնովին փոխեց Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական իրադրությունը, ինչի արդյունքում աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնվեց Իսրայել պետությունը, որը շրջադարձային նշանակություն ունեցավ տարածաշրջանի երկրների համար: Դրա արդյունքում Մերձավոր Արևելքը վերածվեց միջազգային քաղաքական բարդ հանգույցի՝ այն կանգնեցնելով նոր վտանգների և սպառնալիքների առջև: Տարածաշրջանում Իսրայել պետության ի հայտ գալը, անշուշտ, Արևմուտքի, ԱՄՆ-ի և միջազգային սիոնիստական-հրեական կազմակերպությունների ջանքերով, սկիզբ դրեց տևական և արյունալի մի հակամարտության, որից բխող հետևանքները զգալի չափով սրեցին իրադրությունը ողջ տարածաշրջանում, մեծապես ազդելով արաբական երկրների ներքին և արտաքին քաղաքականության վրա:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում միջարաբական հարաբերությունների ընդհանուր ռազմավարությունը, անցնելով զարգացման տարբեր ուղիներ, տարբեր կերպ է անդրադարձել այդ երկրների միջպետական համագործակցության վրա, որտեղ շատ հաճախ առանձին երկրներ առաջնորդվել են նախևառաջ սեփական

շահերով, ինչը, առավել կամ նվազ չափով, անդրադարձել է թե՛ համաարաբական միասնության, և թե՛ համախմբման վրա: Նման իրավիճակն ուղեկցվել է հակասություններով, որն իր հերթին նպաստել է արտաքին ուժերի ակտիվ միջամտությանը տվյալ երկրների ներքին գործերին:

Եվ ահա, տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրադրության և նրա հետ սերտորեն աղերսվող բազում հիմնախնդիրների համապարփակ ուսումնասիրության առումով գիտական մեծ կարևորություն է ստանում Ա. Առաքելյանի թեկնածուական ատենախոսությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է ինչպես տարածաշրջանի, արաբական երկրների փոխհարաբերությունների, Պաղեստին պետության չլուծված հարցի, այնպես էլ կայունության և անվտանգության խնդիրների հետ: Այդ ամենը կարևորվում է նաև Հայաստանի արտաքին քաղաքականության տեսանկյունից, հաշվի առնելով, որ Մերձավոր Արևելքի պետությունները Հայաստանի կարևոր գործընկերներից են, և մեր երկիրը շահագրգռված է այդ տարածաշրջանում խաղաղության ու կայունության ամրապնդմամբ:

Աշխատության մեջ գլխավորաբար արծարծվել են ուսումնասիրվող ժամանակաշրջանի միջարաբական համագործակցության և ռազմաքաղաքական իրողությունները և դրանց հետևած զարգացումները, որտեղ ատենախոսը խուսափել է որոշ խնդիրների հանգամանալից լուսաբանումից, գլխավորաբար անդրադառնալով բուն միջարաբական հարաբերությունների առանցքային հիմնախնդիրներին:

Ժամանակաշրջանն իր առանձնահատկություններով, ռազմաքաղաքական անցուդարձերով, ինչպես նշվեց, հանդիսանում է Մերձավոր Արևելքի պատմության ամենաուշագրավ ժամանակաշրջանը, որտեղ բացի ռազմաքաղաքական գործընթացներից, բախվում են մի կողմից՝ միջարաբական, իսկ մյուս կողմից՝ տարածաշրջանային և միջազգային գերտերությունների շահերը:

Բացի արաբա-իսրայելական հակամարտության հիմնախնդրի ուսումնասիրությունից, ատենախոսությունում քննարկման առարկա են դարձել արաբական երկրներում ընթացող ռազմաքաղաքական գործընթացները, ինչպիսիք են՝ Լիբանանի քաղաքացիական պատերազմը, Իրաքում Սադդամ Հուսեյինի վարչակարգի տապալումը, Արևմտյան ուժերի ռազմական միջամտությունն ու ակտիվացումը Մերձավոր Արևելքում և այլն:

Այս և այլևայլ հիմնախնդիրները հավուր պատշաճի հետազոտելու նպատակով Ա. Առաքելյանը շրջանառության մեջ է դրել հայ, ռուս և եվրոպացի արաբագետների, քաղաքագետների հրապարակի վրա եղած բազմալեզու աղբյուրներ և

գրականություն, ինչով էլ պայմանավորված են աշխատության կառուցվածքն ու նրանում արծարծվող խնդիրները: Բացի այդ, հեղինակը օգտագործել է Արաբական պետությունների լիգայի և Ծոցի տնտեսական համագործակցության խորհրդի կանոնադրությունները, ինչպես նաև հիշյալ ժամանակաշրջանում կնքված տարբեր համաձայնագրերը, այդ թվում նաև՝ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերն ու միջազգային տարբեր համաժողովների փաստաթղթերը, որոնք իրենց հերթին մեծապես օգնել են հեղինակին լուսաբանելու կնճռոտ մի շարք հիմնախնդիրներ: Այլ կերպ ասած՝ խնդրո առարկա թեմայի համար բացառիկ նշանակություն ունեցող բազմալեզու աղբյուրների և գրականության ու այլևայլ նյութերի մանրակրկիտ հետազոտությունը Ա. Առաքելյանին հնարավորություն է ընձեռել շարադրել հայ արևելագիտության կողմից ցարդ ոչ ամբողջությամբ ուսումնասիրված ժամանակաշրջանի վերաբերյալ ինքնատիպ և հույժ ուշագրավ մի աշխատություն:

Ատենախոսությունն իր բովանդակությամբ և քննարկվող հիմնախնդիրների բազմազանության տեսանկյունից նորույթ է , որտեղ նկատելի է հեղինակի ինքնուրույն գիտական հետազոտություններ կատարելու կարողությունն ու հմտությունը:

Ատենախոսի ընտրած թեմայի ժամանակագրական շրջանակները լիովին համապատասխան են Մերձավոր Արևելքի երկրների և ժողովուրդների պատմության պարբերացմանը՝ 1991թ. Մադրիդի խաղաղության համաժողովից մինչև 2011թ.՝ Արաբական գարունը:

Ատենախոսությունն ունի կուռ, թեմայի տրամաբանությամբ պատճառաբանված կառուցվածք, որը նպաստել է հեղինակի առջև դրված նպատակների և խնդիրների լավագույն ձևով իրագործմանը: Հրատարակված սեղմնագիրն ամբողջությամբ արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Ա. Առաքելյանի ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, հավելվածներից և գրականության ցանկից: Աշխատության առաջին գլխում (Միջարաբական հարաբերությունների պաղեստինյան ուղղությունը. Պաղեստինի հիմնախնդիրը արաբական երկրների արտաքին քաղաքական օրակարգում) քննարկման առարկա են դարձել պաղեստինյան հիմնախնդրի նկատմամբ արաբական երկրների դիրքորոշումները և դրանց հետ կապված տարբեր տեսակետները: Հեղինակը համառոտ ձևով անդրադարձել է արաբական երկրների միջև համագործակցության առանցքային հիմնահարցերին, ինչպես նաև մինչև 1991թ Մադրիդի խաղաղության վեհաժողովի կայացման արաբականության գաղափարախոսության որոշ դրսևորումներին, արաբական երկրների զարգացման առանձնահատկություններին, ինչպես նաև Պաղեստինի հիմնահարցի ընկալմանն արաբական աշխարհում: Ապա՝ քիչ թե շատ

լուսաբանվում են 1991թ.-ի Մադրիդի Խաղաղության վեհաժողովը, նրա նպատակներն ու արդյունքները: Ինչպես ճիշտ նշում է հեղինակը, հակաիսրայելական ընդգծված դիրքորոշում ունեցող կողմերը՝ ԱՄՆ նախաձեռնությամբ, առաջին անգամ համախմբվեցին բանակցությունների սեղանի շուրջ: Հարկ է նշել, որ Մադրիդի խաղաղության վեհաժողովն իր առանձնակի դերն ու նշանակությունը ունեցավ թե՛ արաբա-իսրայելական հակամարտության, և թե՛ պաղեստինա-իսրայելյան հարաբերությունների հետագա զարգացումների համար:

Աշխատության երկրորդ գլխում (Արաբական աշխարհ-Իսրայել հակասություններից մինչև խաղաղության հաստատման փորձեր) հեղինակը անդրադարձել է Եգիպտոսի, Հորդանանի, Լիբանանի՝ Իսրայելի հետ խաղաղություն հաստատելու առանձին փորձերին, ինչպես նաև դրանց արդյունքում արաբական աշխարհում խորացող հակասություններին և բևեռացման գործընթացին: Այդ համատեքստում ատենախոսի կողմից ուսումնասիրվել են ԱՄՆ հովանու ներքո արաբական առանձին երկրների՝ Իսրայելի հետ խաղաղության և դիվանագիտական հարաբերությունների հաստատման փորձերը, ինչը, իր հերթին, զգալի չափով սրեց արաբական երկրների հակասությունները: Այդուհանդերձ, արաբական առանձին երկրներ, ինչպես օրինակ Եգիպտոսը, Հորդանանը, փորձեցին խաղաղություն հաստատել Իսրայելի հետ: Նույն գլխում հեղինակը լուսաբանում է 2006թ.-ի լիբանանա-իսրայելական պատերազմը և արաբական տարբեր երկրների արձագանքը: Ատենախոսը անդրադարձ է կատարել Լիբանանի «Հիզբուլլա» կուսակցության դեմ ռազմական գործողություններին և այդ կապակցությամբ արաբական տարբեր երկրների դիրքորոշումներին և այլն:

Աշխատության երրորդ գլխում (Իրաքը և միջարաբական հակասությունների սրումը) վերլուծության են ենթարկվում 1990-1991թթ. Ծոցի ճգնաժամը և այդ կապակցությամբ միջարաբական հակասությունները: Նույն գլխում լուսաբանվում է Սիրիա-Եգիպտոս-Սաուդյան Արաբիա առանցքի ձևավորումը և նրա միջարաբական համագործակցության նշանակությունը: Բացի այդ, ատենախոսը անդրադառնում է անգլո-ամերիկյան ռազմական կոալիցիային, 2003թ.-ի Իրաք ներխուժման դրդապատճառներին, հետևանքներին, ընդգծում Մերձավոր Արևելքում ուժերի հավասարակշռության խախտումը:

Աշխատության չորրորդ գլխում (Միջարաբական բազմակողմ համագործակցություն) հետազոտության են ենթարկվում արաբական երկրների տարածաշրջանային երկու կազմակերպությունների՝ Արաբական պետությունների լիգայի և Ծոցի տնտեսական համագործակցության խորհրդի գործունեությունը, միջարաբական համագործակցության առանձնահատկությունները, և տվյալ

կազմակերպությունների՝ արաբական երկրների հակասությունների մեղմացմանն ուղղված ջանքերը:

Ինչպես ցանկացած աշխատանք, այնպես էլ ներկա ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից.

- *Աշխատության առաջին գլխում հեղինակը համառոտ ակնարկով ներկայացրել է միջարաբական համագործակցության հանգուցային հիմնահարցերը մինչև 1991թ. Մադրիդի խաղաղության համաժողովը (էջ 13-28): Խորհուրդ կտայինք կրճատել որոշ հատվածներ և տալ տողատակերում: Կարծում ենք, որ Մադրիդի խաղաղության համաժողովին նվիրված ենթագլխում (էջ 28-47), որը, անշուշտ, լավ է շարադրված, հեղինակը, հնարավորության սահմաններում, ներկայացներ կողմերի տեսակետները արաբա-իսրայելական հակամարտության վերաբերյալ: Մեր կարծիքով, այստեղ արժե անդրադառնալ Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆահդի պլանին, որը, ուղղակի կամ անուղղակի ձևով, շարունակեց մնալ վերոհիշյալ երկրի քաղաքական օրակարգում և այս կամ այն ձևով հետագայում իր ազդեցությունն ունեցավ, հատկապես Եգիպտոսի և Հորդանանի՝ Իսրայելի հետ հարաբերությունների կարգավորման վրա:*
- *Չորրորդ գլխում առաջարկում ենք, հնարավորության սահմաններում, անդրադարձ կատարել ԱՊԼ և ԾՏՀԽ կազմակերպությունների համագործակցությանը տարածաշրջանային և Արաբական Մաղրիբի միություն կազմակերպությունների հետ:*
- *Խորհուրդ կտայինք հեղինակին ճիշտ օգտագործել հայագիտության մեջ ընդունված արաբերեն որոշ անունների և անձնանունների տառադարձումը: Պետք է տարբերել արաբերեն «ալ- ال» որոշիչ հոդը և «ալ- آل» որպես դինաստիայի կամ ընտանիքի անվանում:*
- *Խորհուրդ կտայինք ատենախոսին, հնարավորության սահմաններում, ավելի շատ օգտագործել արաբ գիտնականների և քաղաքագետների աշխատությունները:*

Այս և այլ կարգի դիտողությունները բնավ էլ ստվեր չեն գցում Ա. Առաքելյանի գիտական արժեքավոր աշխատության վրա: Անառարկելի է, որ, լինելով խնդրո առարկա թեմայի համակողմանի ուսումնասիրություն, լույս է սփռում նրա շատ ասպեկտների վրա: Ընդհանուր առմամբ Ա. Առաքելյանի աշխատությունը հաջողված

գործ է, ունի գիտաքաղաքական և կիրառական կարևոր նշանակություն: Հեղինակի եզրակացությունները հիմնավոր են և համոզիչ:

Ելնելով վերոնշյալից՝ միջնորդում եմ Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի մասնագիտական խորհրդի առջև՝ Ա. Առաքելյանին շնորհելու իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը, որին նա լիովին արժանի է:

16/06/2023

Արշակ Փոլադյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Թունիսի Հանրապետությունում
և Մարոկկոյի Թագավորությունում ՀՀ դեսպան

Հաստատում ենք՝
դեսպան Ա. Փոլադյանի ստորագրությունը
Թունիսում ՀՀ դեսպանություն